ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Լոռու մարզի <<Վանաձորի բռնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոց>> ՊՈԱԿ-ում հիմնանորոգման (հատակի բարձրացում և հիմնանորոգում, սանհանգույցի հիմնանորոգում) աշխատանքների ձեռքբերման նպատակով 2017 թվականի հոկտեմբերի 19-ին կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/20 պայմանագրում 2017 թվականի դեկտեմբերի 18-ին կնքված N 3 համաձայնագրով կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	Պայմանագրի 4.6 կետի 5-րդ ենթակետ:
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրի ընդհանուր գնից 1 020 000 (մեկ միլիոն քսան հազար) ՀՀ դրամը փոխանցում է ՀՀ ֆինանսների նախարարության <<900008000011 <<մրցութային հայ-տերի և պայմանագրերի կատարման ապահովում>> դեպոզիտային հաշվին:
Փոփոխության հիմնավորում	ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 112-րդ կետի 5-րդ ենթակետ:

Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

/19.10.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/20 պայմանագրի/

ք. Երևան 18 դեկտեմբերի 2017թ.

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս Կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և <<Բազալտշին>> ԱԿ-ն (այսուհետ՝ Ընկերություն), ի դեմս Ընկերության տնօրեն Լ.Մարտիրոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով 19.10.2017թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/20 պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Պատվիրատուն Պայմանագրի 5.1 կետով նախատեսված գումարից 1 020 000 (մեկ միլիոն քսան հազար) ՀՀ դրամը փոխանցում է ՀՀ ֆինանսների նախարարության <<900008000011 <<մրցութային հայտերի և պայմանագրերի կատարման ապահովում>> դեպոզիտային հաշվին: Նշված գումարն աշխատանքներն ավարտելուց հետո՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կվճարվի Կապալառուին՝ վերջինիս բանկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011012730 ՀՎՀՀ 02565827	<<Բազալտշին>> ԱԿ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Գեղարքունիք <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ Հ/Հ 1150000278680100 ՀՎՀՀ 08400345
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան (ստորագրություն) Կ.Տ.	_____ Լ.Մարտիրոսյան (ստորագրություն) Կ.Տ.